ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| 1. | Անունը, ազգանունը | Տիգրան Գաբրիելյան |
| 2. | Զբաղեցրած պաշտոնը | ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ |
| 3. | Գործուղման վայրը և ժամկետը | 2019 թվականի ապրիլի 8-10<br>Բրատիսլավա (Սլովակիայի Հանրապետություն) |
| 4. | Հրավիրող կողմը | ՄԱԿ-ի զարգացման ծրագիր |
| 5. | Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը | Մասնակցություն «Նորմատիվ-իրավական շրջանակի ստեղծում՝ արդյունքների ձեռքբերման գործընթացի համար» թեմայով աշխատաժողովին |
| 6. | Քննարկված թեմաները | Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են հարցեր, որոնք վերաբերում են կառավարությունների մարտահրավերների արդյունքների ձեռքբերման գործընթացին, միջնորդների, ծառայություններ մատուցողների և ներդրողների դերի բարձրացմանն ուղղված որոշակի իրավական դաշտի ձևավորմանը, սոցիալական ազդեցության պարտավորվածության բազմաթիվ դերակատարների համար առավել բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով կառավարությունների դերի բարձրացմանը: Բացի այդ, քննարկվել են բյուջետավորմանը և գնումներին վերաբերող հարցեր, ինչպիսիք են օրինակ տարբեր ֆինանսական փուլերում պայմանագրային հարաբերությունները, տարբեր գերատեսչությունների միջև գնումների կամ բյուջետավորման բազմաշերտ արդյունքների ձեռքբերումը, ինչպես նաև արդյունքների ձեռքբերման գործընթացին վերաբերող հիմնական հարցեր: |
| 7. | Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը | **Ապրիլ 9, 2019**<br>**<<Արդյունքների վրա հիմնված ֆինանսավորում, Իրավական խնդիրներ>>**<br>• Լեյլա Սադիկու, ՄԱԶԾ Ստամբուլի տարածաշրջան<br>• Էլինա Ջառվելա - ՄԱԶԾ<br>• Էվա Գոնցալվովա, Սլովակիայի Հանրապետության ֆինանսների նախարարություն<br>**<< Շահագրգիռ կողմերի պայմանագրեր, խնդիրներ և հիմնական նկատառումներ >>**<br>• Ռուաիրի Մակդոնալդ – GoLab<br>• Անդրեա Անաստասիու – GoLab |

| | | |
|---|---|---|
| | | **<<Սոցիալական ներդրման ծրագրերի պայմանագրային պարտավորությունները և պետական գնումները Ֆինլադիայի օրինակով >>**<br>• Աննա Կուզնիեմի-Լին, Castrén & Snellman Attorneys Ltd<br>**<<Օրենսդրական ռիսկերի վերլուծություն>>**<br>• Պիտեր Վանդերալե, Stratigos<br>**Ապրիլ 10, 2019**<br>Ներկայացվեցին մասնակից երկրների փորձը և հաջողությունները այս ոլորտում |
| 8. | Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածություններ ը, ստորագրված փաստաթղթերը | Պայմանավորվածություններ են ձեռք բերվել ՄԱԿ-ի զարգացման ծրագիրի հետ շարունակելու գյուղ ոլորտում արդյունքի հիման վրա վճարումների մեխանիզմների ներդրմանը, մասնավորապես կովերի կաթնատվության բարձրացման և կաթի որակի բարձրացմանն ուղղված սոցիալական ազդեցությամբ ֆինանսավորման ծրագրերի հետագա իրականացման միջոցով: |
| 9. | Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները | Արդյունքի հիման վրա վճարումների մոտեցումները, կարելի է ասել արդեն իսկ կիրառվում է ՀՀ Գյուղատնտեսության նախարարության ընթացիկ իրականացվող ծրագրերում, այն է խելացի ֆերմաների ներդրման ծրագիրը: Հետագայում առաջարկվում է նաև ուսուցման ծրագրերը կազմելիս հաշվի առնել վերոհիշյալ մոտեցումները: |
| 10. | Գործուղվողները | ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյան |
| 11. | Ստորագրությունը, ամսաթիվը | 15.04.2019թ<br> |